

ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՔՅՈԹԱՀԻԱՅԻ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ»

Ս. Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայոց պատմական աղբյուրները, ինչպես հայտնի է, սեփական ժողովրդի պատմության բազմաբնույթ հարցերի արտացոլմանը զուգընթաց, հետաքրքրությունների ոլորտ են ընդգրկել նաև աշխարհագրական միկնոյն տարածաշրջանում գտնվող տարբեր էթնիկ միավորների ու քաղաքական կազմավորումների պատմության ամենատարբեր խնդիրներ, առավել ևս այնպիսի պայմաններում, երբ հայ ժողովուրդը թե՛ իր պատմական տարածքում և թե՛ նրանից դուրս ներգրավվել էր հաջորդաբար պատմասպարեզում միմյանց հերթափոխող ռազմաքաղաքական պետությունների առևտրատնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի ոլորտները: Նաև այդ պարագայով է պայմանավորված հայկական սկզբնաղբյուրների նշանակալիությունը գիտական այնպիսի մարզերի համար, ինչպիսին են բյուզանդագիտությունը, իրանագիտությունը, արաբագիտությունը, վրացագիտությունը և այլն: Այս շարքում հիշատակելի է նաև թուրքագիտությունը, ուստի հայկական որոշ սկզբնաղբյուրներ, բնադրով կամ թարգմանությամբ, շրջանառում են թուրքագիտական ոչ քիչ աշխատություններում¹:

Բազմաթիվ են նաև այն աղբյուրները, որոնք զուտ պատմագրական նպատակ չեն ներկայացնում, սակայն աչքի են ընկնում այդ կարգի նյութի պարունակմամբ: Նման սկզբնաղբյուրների թվին կարելի է դասել նաև XV—XVII դդ. Քյոթահիայի Ս. Աստվածածին եկեղեցում կազմված և «Քիւթիւկ» անունը կրող ժողովածուն՝ «Հիշատակարանը»²: Նրա էջերում տեղի հայկական համայնքի պատմության առանձին հարցերի լուսաբանումից բացի, կան Օսմանյան կայսրության միջնադարյան պատմությանը վերաբերող բազում տեղեկություններ: Հուշարձանի կազմությանը մասնակցող ժամանակագիրները տեղի ունեցած իրադարձությունները, պատմական իրողությունները ներկայացնելիս ևրբեմն հաղորդում են թուրքագիտության համար առանձնակի կարևորություն ունեցող տվյալներ, որոնք մերթ զալիս են գիտությանը արդեն իսկ ծանոթ նյութերը լրացնելու և ճշգրտելու, իսկ հաճախ էլ հաղորդում են բացառիկ նշանակություն ունեցող տեղեկություններ, որոնք թույլ են տալիս միանգամայն նոր հարցադրումներ ու մոտեցումներ մշակելու միջոցով տալ հարցի նորովի լուսաբանում:

Սկզբնաղբյուրում Թուրքիայի պատմությանը վերաբերող էջերը ներկայացվում են հիմնականում երկու եղանակով, մեկը՝ Քյոթահիա քաղաքի անցքերը նկարագրելիս, մյուսը՝ ներպետական և արտաքին քաղաքական խոշոր իրադարձությունների կապակցությամբ: Հարկ է նշել նաև, որ շարադրված

¹ Հայկական սկզբնաղբյուրները թուրքերենի թարգմանության մարզում նշանակալի է մասնավորապես Ն. Տեր-Անդրեասյանի աշխատանքը. H. Andriasyan. Turk tarihine aid ermeni kaynaklari. Istanbul, 1950; Eremya Çelebi Komurcuyan. Istanbul tarih. Istanbul, 1952. Po'nyali Simeon'un Seyahetnamesi (1603—1619). Istanbul, 1964. G. Incicyan Istanbul XVIIII asırda. Istanbul, 1956 և այլն:

² Կուտիահայ ժամանակագրություն, հրատարակեց Ն. Պ. Զորթյան. Վիեննա, 1960:

Մեր անմեղ ի մանսուս մեր,
վեղերդ դմեղ վրշտացուցիալ⁷:

Դժգոհ կառավարիչներն Աբազա փաշայի ղրխավորությամբ դիմեցին վճռական գործողությունների: «Հիշատակարանը» այս կապակցությամբ վկայում է. «Եւ եղեւ թվականն 1107 (1107) յանկարծակի երեւեցաւ ոմն որ կոչիւր Ասլազա Հասան փաշայ եւ էր մանսուպա Հալէպ եւ ելեալ ի քաղաքէն ժողովեաց բաղում զօրս եւ եկեալ մինչև ի Ղոնեայ հաշտ ընդ թագավորին եւ ետոյ սկսաւ դիմագարծ լինել եւ այլ բազում զօրս ժողովելով եկն աստ ի Քոթահիոյ քաղաքս եւ նստաւ. Թ. (9) օր Աստուածածինն պահուցն, շատ նեղութիւն քաշեցինք»⁸: Ինչպես տեսնում ենք, իրենց ճանապարհին ապրստամբ ուժերն անցել էին Քյոթահիայի միջով, որտեղ մնացել էին ինն օր, և այդ ընթացքում քաղաքի բնակչությունը ստիպված է եղել դիմագրավել բաղում նեղությունների: Այստեղից նա «եկեալ գնաց ի Պրուսայ, նստաւ ԻՅ. (25) օր աւելի կամ պակաս» և «ինքն սկսեց փաշայութիւն տալ», իսկ «այս քաղաքն (Քյոթահիան) ետուր ճանի Միրզէ անուն փաշայի», որը «եկաւ զաբտ արաւ քաղաքս, շատ աւերութիւն արաւ»⁹:

Ի տարբերություն նախորդի, այս անգամ քաղաք մտնելիս «տանուտէրն» հանդիպել էր կառավարական ուժերին օգնության բարձրացած աշխարհազորայինների դիմադրությամբ, որոնք և զգալի կորուստներ էին հասցրել նրան¹⁰: Ըստ «Հիշատակարանի»՝ դեռևս Քյոթահիայում գտնվելու ժամանակ «էր թիւ հեծելին ՀԲ. (70.000) ավելի կամ պակաս», իսկ հետագայում Աբազա փաշան «զօրքն աւելուց մինչև ՀԲ. (100.000) կամ ՀԵԲ. (150.000), քանզի ժողովեաց զամենայն փաշայքն ի դուխ իւր»: Բովական նման կրկնաճը խոսում է հօգուտ այն հանգամանքի, որ ապստամբների շարքերը համալրված էին ոչ միայն Հալէպից իր հետ եկած, այլև Քյոթահիայից դուրս գալուց հետո ճանապարհին անդամակցած փոքրասիական դժգոհ կառավարիչներով և ցույց է տալիս հակակառավարական տրամադրությունների աճի տեմպերը: Արագորեն տարածվող շարժման սարսափից սուլթան Մեհմեդ 1V-ը պահանջեց մեծ եպարքոսի անհապաղ վերադարձը.

Ըստ որում արքայ զվեղիւր ստիպէ՝
մի՛ յամառիւ, այլ փութալ գալ¹¹,

Քյոթիրուլուի Ադրիանապոլիս վերադարձից հետո խուճապահար վիճակը հաղթահարվեց՝ արձակվեց շեյխ-ուլ-խսլամի կողմից հաստատված սուլթանի հրովարտակը¹², որտեղ վերջինս միանգամայն վճռականորեն պահանջում էր «զլուխն իմ ըռզակն ձեր»¹³:

Ի վերջո, 1658 թ. դեկտեմբերի 11-ին Ըլլըբ քաղաքից ոչ հեռու գտնվող դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում պետական ուժերի կրած պարտությունից հետո, կենտրոնական իշխանությունները ստիպված եղան խույս տալ առճակատման քաղաքականությունից. «Եւ դարձեալ եկն թագաւորէն հրամանք, ասելով թէ՝ անցեալ եմ վնասէտ ձերմէ, եւ այլ բազում պատրողական բանս եւ զՀալէպն դարձեալ մանսուպ տուեալ», ապա դիմելով

7 Երեմիա Քէօմիւրճեան. Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագավորացն: Աշխատասիրությամբ Ժ. Մ. Ավետիսյանի, Երևան, 1982, էջ 258:

8 Կոտինահայ ժամանակագրութիւն, էջ 28:

9 Նույն տեղում:

10 İsmail Hakkı Kutahya şehri. İstanbul, 1932, s. 151.

11 Երեմիա Քէօմիւրճեան. Պատմութիւն..., էջ 259:

12 Գաբրիել Այվաղոլսկի. Պատմութիւն Օսմանեան պետութեան. հ. Բ, վեներիկ, 1841, էջ 162—163:

13 Կոտինահայ ժամանակագրութիւն, էջ 28—29:

խորամանկությունների, «գտեալ ժամ ինչ թաւոյ եւ սատկեցուցին ի փառն սատանայի. եւ զօրքն իւր ի տեղիս-տեղիս մահացուցին»¹⁴ և դրանով իսկ վերջ տվեցին ապստամբությանը:

XVII դարի երկրորդ կեսի անցուդարձերն արձանագրելիս, թեև ոչ մանրամասնորեն, «Հիշատակարանն» անդրադառնում է նաև «Երեսնամյա պատերազմի» ավարտման հետևանքով վերստին եվրոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Լեհաստանի և Ավստրիայի «Արևելյան հարցի» շուրջ ռազմաքաղաքական հետաքրքրությունների կենտրոնացման, նոր հակամարտության առաջացման, նրա ընթացքի և արդյունքների խնդիրներին: Չնայած Սուլթան Մեհմեդ IV-ի կողմից վիճակի շտկման և ռազմական ուժերի քանակական ընդլայնման նպատակներով ձևակերպված քաջլերին, Ռուրքիան ռազմարշավներից դուրս եկավ իբրև սլարտված պետություն: Երկարատև բանակցություններից հետո, 1699 թ. հունվարի 26-ին Կարլովիցում Վենետիկի, Ավստրիայի և Լեհաստանի հետ կնքվեցին պայմանագրեր, որոնց արդյունքում Օսմանյան կայսրությունն առաջին անգամ ստիպված եղավ տարածքային զրալի զիջումներ կատարել: Պատմական այս անցուդարձը քննության առնող հատվածում հուշարձանը պարունակում է հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Այս վերոգրեալ վէճերն եւ շէյխ իսլամն¹⁵ յոյժ քաղցրացան ի վերայ քրիստոնէից՝ մինչ զի Ռ. (1000) եկեղեցոյ եւ կամ թէ վանօրէից աւելի եւ ոչ պակաս ֆէրման ետուր նորոգելոյ, որ ապականեալ եւ գոյգայեալ էր բազում տեղիս ի անօրինւոյ ձևացն»¹⁶:

Անշուշտ՝ դժվար է ուղղակիորեն պատասխանել այն հարցին, թե որքանով էին հայկական պաշտամունքային կառույցները ներկայացված այս նորոգվելիք «եկեղեցոյ եւ կամ թէ վանօրէից» շարքում և ի՞նչ չափերի էին հասնում իրական վերականգնողական աշխատանքները¹⁷: Սակայն ենթադրելի է, որ ձեռնարկումը գերազանցապես պայմանավորված էր ոչ այնքան քրիստոնյա հպատակների նկատմամբ ունեցած «կարեկցանքի» ու «զթասիրության» թելադրանքով, որքան ձգձգված բանակցությունների ընթացքում քաղաքական դիվիդենտներ շահելու նկատառումներով, եթե բացառենք, որ դա կարող էր լինել նաև հակադիր կողմի պահանջը:

«Հիշատակարանում» արտացոլված տեղեկությունների հաջորդ խումբը ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում կայսրության XVIII դարի սկզբի պատմության հարցերը: Քանի որ ձեռագրի «հիմնական վերանորոգողը» Անտոն Կուտինացին, տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների անմիջական ականատեսն ու վկան է, դեպքերի շարադրանքն այստեղ ավելի հանդամանալի բնույթ է կրում:

Սուլթան Ահմեդ III-ի գահակալման հետ կապված «Ադրիանապոլսի միջագեպ» կոչվող դեպքերն արձանագրելուց հետո, հեղինակն անցնում է պատմական այնպիսի խոշոր իրադարձության քննարկմանը, ինչպիսին 1710—1713 թթ. ռուս-թուրքական պատերազմն է:

1709 թ. հուլիսի 27-ին Հյուսիսային պատերազմի ընթացքում Պոլտավայի մոտ ռուսական բանակից շվեդների կրած պարտությունից հետո, թագավոր Կարլոս XII-ի և գետման Մադեպայի գլխավորությամբ զորայինների մի ստվար խումբ Օսմանյան կայսրության տարածք փախչելով՝ կարողացավ փրկվել վերջնական ջախջախումից. «Եւ ինքն (Իմա՝ շվեդների թագավորը—

¹⁴ Նույն տեղում, էջ 29:

¹⁵ Պոսքը վերաբերում է շէյխ-ուլ-իսլամ Ֆեյզուլահ էֆենդուն (Câmi'î-ür-Riyâseteyen Erzuruumlu Seyyid Hacı-Feyzullâh Efendi), որը «Հոգեւոր քաջնորդության» տարիներին պետական ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքերում:

¹⁶ Կուտինահայ ժամանակագրություն, էջ 39:

¹⁷ Եթե հետևելու լինենք «Հիշատակարանին», ապա նման աշխատանքներ իրոք կատարվել են, բանդի վերահիշյալ հատվածից հետո այնտեղ կարգում ենք. «Սկսած վերստին շիճել ողորմութեամբ Աստուծոյ»:

Ս. Մ.) փախուցեալ եկն երկիրն Օսմանցոց խմբ. (40.000) զօրոք, աւելի կամ պակաս»¹⁸։ Կատարված դեպքը իր որոշակի կնիքը դրեց ռուս-թուրքական փոխհարաբերությունների զարգացման հետագա ողջ ընթացքի վրա։ Սկզբնական շրջանում թուրքական իշխանությունների դիրքորոշումն այդ խնդրի նկատմամբ չափազանց հստակ էր։ Նրանք հայտարարել էին, թե «քանզի շվեդական թագավորն եկել է աստծո պահպանյալ երկիրը, ապա այնքան ժամանակ, որքան որ նա այստեղ կգտնվի, մենք կաջակցենք նրան»¹⁹։ Թուրքական կողմի այդօրինակ տրամադրությունների մասին է վկայում նաև «Հիշատակարանը»։ «Օսմանցիքն խնամարկեալ՝ ետուն զահրէն, ասելով թէ որովհետեւ անկար երկիրն մեր՝ պարտիմք եւ մեք անկելոյն ձեռնտու լինել»²⁰։ Այն, որ Պետրոս Մեծը առաջնային նշանակություն էր տալիս այդ հարցի կարգավորմանը, երևում է սուլթանին հասցեագրված նամակներից²¹։ Սակայն նամակագրական կապի միջոցով Կարլոս XII-ի ճակատագիրը որոշելու փորձից հետո կողմերը բռնեցին բանակցությունների ճանապարհը։ Ռուսաստանից «վասն այլոց իրաց» եկած դեսպանորդը սուլթանին «եւս իրիճա»²² է արեր, ասելով՝ իմ խաթեբս համար սորա ճամբայ տաս, որ երգայ իւր երկիրն։ Եւ Մոսկովն չէառ անձն, ասելով, թէ՝ իմ թշնամին իմ ձեռս տուր»²³, բայց պատասխանը մնում էր նույնը, թե «որովհետեւ եկաւ մեզ անկաւ, անհնար է զնա քեզ տալն. բայց թէ դու կամիս մեր հաշտութիւնն՝ սորայ տեղիքն իրան տաս»²⁴։ Ծագած անհամաձայնություններն ու վեճերը խաղաղ ձևով լուծելու փորձը «երկարեցաւ մինչեւ երկու տարի», երբ 1710 թ. նոյեմբերի 10-ին Օսմանյան կայսրությունը եվրոպական տերությունների հրահրմամբ սլատերադմ հայտարարեց Ռուսաստանին։

Սկսված սլատերադմում Պետրոս I-ը որոշակի հույսեր էր կապում նաև թուրքական բռնակալության ճնշման տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների կողմից բարձրացվելիք ազգային ազատագրական շարժումների հետ։ Դեռևս մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը, ռուսական կողմը մոտավորապես պատերազմում ցուցաբերվելիք խոստացված օգնության իրական շրջանակներն ու չափերը ճշտելու նպատակով, բանակցությունների մեջ էր մտել Մոլդավիայի գոսպոդար Դմիտրի Կանտեմիրի և Վալախիայի վոյեվոդա Կոնստանդին Բուսկովիչի հետ և պարտավորվել էր ընդունել վերջիններիս անկախությունը։

Սրանցից երկրորդի՝ Վալախիայի վոյեվոդա Կոնստանդին Բուսկովիչի մասին «Հիշատակարանը» չափազանց ուշադրավ մի վկայություն է պարունակում։ Վերոհիշյալ անցքերի ընթացքը ներկայացնող հատվածի համապատասխան մասը ցույց է տալիս, որ ռուս-թուրքական պատերազմի հրահրման գործում Վալախիայի վոյեվոդան ունեցել է իր ամենակտիվ մասնակցությունն ու ներգործությունը։ Դեպքերի զարգացումն ըստ աղբյուրի հետևյալ ընթացքն է ունեցել. «Ուլահ պէկն» ռուսական ցարին հատուկ «գիր է ուղղկեր», որով տեղեկացնում է նրան և առաջարկում «թէ Օսմանցին անգոր է, գաս որ միատրինք եւ երգեալ Ստամպոլն առնումք»²⁵։ Կոնստանդին

¹⁸ Կոնստանդայ ժամանակագրություն, էջ 48։ Որոշ տվյալներով նշված թիվը խիստ չափազանցված է, քանզի Ի. Ուղունյարըլըի հաշվարկներով սահմանն անցնող զորախմբի քանակը հասնում էր 300 հոգու։ Տե՛ս Շ. Փ. Орешкова. Русско-турецкие отношения в начале XVIII века. М., 1971, с. 63.

¹⁹ A. N. Kurat. İsveç Kralı XII Karlın Türkiye'de kaldığı zaman mektuplar ve vesikalar. İstanbul, 1943, s. 119—120.

²⁰ Կոնստանդայ ժամանակագրություն, էջ 48—49։

²¹ Շ. Փ. Орешкова. Указ. соч., с. 60.

²² Իրիճա (irica) — խնդրել։

²³ Կոնստանդայ ժամանակագրություն, էջ 49։

²⁴ Նույն տեղում։

²⁵ Նույն տեղում, էջ 50։

Բռանկովիչի այս նախաձեռնության լուրը շուտով հասնում է նաև սուլթանին և նա «առ ժամայն գրեաց հրովարտաք Ուլահ պէկին եւ բերեալ Դ. (4) որդովք եւ Բ. (2) փեսոքն հանդերձ կանամք եւ եղ ի բանտի. եւ առաքեաց այլ եւս ֆէրման ընչիցն եւ ապրանացն»²⁶։ Կալանավորված վոյեվոդան և նրա որդիները, սակայն, մահվան են դատապարտվում միայն մի քանի տարի անց, երբ սուլթանը Մորեայի դեմ նոր արշավանքի էր նախապատրաստվում. «Թվին Ուճկ'ի. (1164) եւ գլխատեց պէկն Դ. (4) որդոք, եւ կանայք նոցա եւ թոռն մի Ը. (8) տարվան Բ. (2) փեսայ հետ սուրկուն»²⁷ արարին մեր Քոթա-հիու բերդին»²⁸։

Բերված այս հատվածից էլ հենց պարզ է դառնում կատարված դեպքերի մասին հեղինակի ունեցած այսչափ հետաքրքրության ու մանրամասնությունների իմացության աղբյուրը։ Հաղորդվող նյութի իսկությունն նկատմամբ ընթերցողի վստահությունը շահելու նպատակով գրիչն հղում է կատարում քաղաքի բանտում պահվող վոյեվոդայի հարազատների վրա. «նոքա եկեալ պատմեցին ստոյքս, թէ մենք սէպէպ»²⁹ եղանք Մոսկովու զահրէն Օսմանցոցն առնեսնելու ճանպարհնիս եկաւ մեր արածն, այսպէս ստոյքն լուաք եւ գրեցաք»³⁰։

Պատերազմի ծագման պատճառներից բացի, սկզբնաղբյուրը մասամբ անդրադառնում է նաև ռազմական գործողությունների ընթացքին։ Նշենք, որ մի շարք օբյեկտիվ հանգամանքների թելադրանքով, ոռոսական բանակի հրամանատարությունն անընդհատ ստիպված էր իր ծրարների մեջ փոփոխություններ կատարել³¹, ինչը, սակայն, շտկեց ստեղծված իրավիճակը։ Միայն հունիսի առաջին կեսին, ոռոսական բանակի շրջափակման մեջ ընկնելուց հետո և լիակատար ջախջախումից փրկվելու նպատակով է, որ սկսվեցին անհապաղ միջոցներ ձեռնարկվել հակամարտության խաղաղ կարգավորման ուղիների որոնման առումով։ Կատարված անցքերն իրենց արտացոլումը են գտել նաև «Հիշատակարանի» էջերում. «[Ռուսներն] այնչափ պարտեցան, որ մեկ օրն տասն դալէ ետուն հանդերձ պատերազմի գնացող խառչովն 1200. (36.000) քէսէ այս յայտնի եւ համարձագ թագաւորին, թող թէ անյայտ եւ ծածուկ վէգիրին եւ այլ նախարարաց եւ պարօնաց»³²։ Հատկանշական է, որ հեղինակը ոռոսների պարտության միակ պատճառը տեսնում է նրանց «հպարտության» մեջ, որոնք «եկեալ համբաւելով, թէ գնամք մեծ քաղաքն կ'առնումք» և հենց այդ բանի համար էլ «Աստուած իւրեանց [թուրքերին] թեւ եւ դիկունք եղեւ»։ Ուստի դիմում է սուրբգրական ասույթներին. «Քանզի ասէ իմաստունն Տէր ամբարտաւանից հակառակ կայ եւ այլն»³³։

Ստորագրված պայմանագրի լուրն առաջ բերեց ոչ միայն Կարլոս XII-ի դժգոհությունը³⁴, այլև սուլթան Ահմեդ III-ի խիստ զայրույթը. «Եւ թագաւորն իմացաւ, որ հաշտութիւն արարին եւ արձակեցին զնոսա խաղաղութեամբ, բարկացալ յոյժ ի վերայ եպարգոսին իւրոյ եւ այլ նախարարացն, ասելով թէ՝ մեղուն չսպառած մեղրն ինչու առիք»³⁵։

Ռուս-թուրքական հակամարտության կարգավորմամբ, սակայն, Օսմանյան կայսրության կառավարող շրջանների նվաճողական կրքերը չնվազեցին։

²⁶ Նույն տեղում, էջ 50—51։

²⁷ սուրկուն (surgun et.)—աքսորել։

²⁸ Կուտինազայ ժամանակագրություն, էջ 51։

²⁹ սէպէպ (sebeb ol.)—պատճառ չիլնել։

³⁰ Կուտինազայ ժամանակագրություն, էջ 51։

³¹ С. Ф. Орешкова. Указ. соч., с. III.

³² Կուտինազայ ժամանակագրություն, էջ 49։

³³ Նույն տեղում։

³⁴ С. Ф. Орешкова. Указ. соч., с. 131.

³⁵ Կուտինազայ ժամանակագրություն, էջ 50։

Ձեռք բերված հաջողություններով ոգևորված և ի հատուցումն Եվրոպայում կորցրած տարածքների 1715 թ. մեծ եպարքոս Դամադ Ալի փաշայի գլխավորությամբ թուրքական բանակը նոր զորարշավ կատարեց Սորեայի վրա³⁶:

Ի տարբերություն անցքերի շարագրման նախորդ ձևի, թեև «Հիշատակարանի» հեղինակը մանրամասնորեն կանգ չի առնում արշավանքի ընթացքի պատմության վրա, սակայն հաղորդում է հետազոտողի ուշադրությանն արժանի կարևոր մի փաստ: Նախ, հարազատ մնալով պատճառաբանման գաղափարական իր սկզբունքներին, մեղքերի ղղալի բաժինը կատարվածի համար նա բարդում է իր հավատակիցների վրա. «Այսպես եւ սոքայ առհասարակ կրեն զպատիժն պատուհասին, քանզի տեղեկանայի բազում աւուրս երդ եւ եկողաց լզլորպիսութենէ կրօնից քրիստոնէից եւ պատուիրանացն Աստուծոյ պահպանութեան. եւ ոչ իմացայ: Իսկ որժամ եկին բազում գերիք արք եւ կանայք եւ խորհի փիլիսոփայք, եւ նոքա եկեալ պատմէին, թէ կարգ եւ կրօնք քրիստոնէութեան խափանեալ էր. ժամատեղք եւ աղօթք եւ աստուածապաշտութիւն մոռացեալ էր: Եւ ի տեղի սոցա զորացեալ էր ծուլութիւն եւ պղերքութիւն եւ սրբեցութիւն եւս առաւել իքամոլութիւն. ահա պաճառն լուեալ ստուգիւ բազում երեւելի եւ հանճարեղ իմաստնոց եկեղեցի կանաց»³⁷: Սվ ապա՝ այս հատվածի ամենաուշագրավ վկայությունը 1686 Վենետիկի կողմից Մորեայի զավթումից հետո տեղի մահմեդականների զանգվածային կրոնադարձության փաստն է: Այդ կասկածից զուրկ պատմ. փաստ է. «Սւ Տաճկաց բազումք ի միջոյ սոցայ ելեալք՝ ցրուեցան երկիրն Սամանցոց, եւ այլք յոլովք Տաճկաց անդամացեալք՝ դարձան եւ եզեն քրիստոնէանայք»: Ընդ որում, «համատարած հավատափոխության» առաջնեկն եղ մահմեդական հոգևորականությունը. «Եւ շատ ուլամէք եւ կանանշագլուլք, մկրտեցան», իսկ «առամիկք զնոսա տեսանելով ամենեքեան դարձան եւ եղնս քրիստոնէայք»³⁸:

Սամանյան կայսրության պատմությանն առավել հատկորոշ է քրիստոնյա հպատակների մահմեդականացումը, մանավանդ՝ ենիչերիների կազմում ընդգրկելու նպատակով քրիստոնյա երեխաների հավաքագրումն ու մահմեդականացումը³⁹, հավատափոխության նպատակով արհեստավորական համաքարություններում աստիճանակարգի փոփոխման արարողության օգտագործումը⁴⁰, մահմեդականություն դավանողներին՝ պետությանը վճարվող մի շարք հարկաչափերի նվազեցումն ու դատաիրավական հարցերում նրանց վերապահվող նախապատվությունը⁴¹ և այլն, սակայն մահմեդականների այսչափ զանգվածային հավատափոխումն ու քրիստոնեացումը հազվագեպ իրողություն է: Հետաքրքիր է նաև այն, որ Մորեայի մահմեդական բնակչության կրոնադարձ լինելու հանգամանքը թելադրված էր ոչ թե ստիպողական քայլերով, այլ հաստատված ապրելաձևի հետ մերվելով, քանի որ «առնէին խնամութիւն ի միջի իւրեանց՝ տալով դստերս իւրեանց յուստերաց քրիստոնէից եւ առնելով դստերս քրիստոնէից յուստերաց իւրեանց»⁴²:

³⁶ J. Hammer. Histoire de l'Empire Ottoman depuis son origine jusqu'à nos jours. Paris, t. XIII, 1839, p. 267—275.

³⁷ Կուտինասայ ժամանակագրութիւն, էջ 53—54:

³⁸ Նույն տեղում, էջ 51—52:

³⁹ Selsu Mebden-i kâşun-ı İenicheri odjagı tarixi (История происхождения янычарского корпуса). Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И. Е. Петросян, М., 1987.

⁴⁰ Հ. Ս. Անասյան. Թուրքական Ֆեթուվաթը եւ հայերը (Թուրքիայի ձուլողական բազմազանության պատմությունից).—Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 581—621:

⁴¹ Մահմեդականներն, օրինակ, աղատված էին այնպիսի հարկատեսակի վճարումից, ինչպիսին գլխահարկն է՝ չիզն:

⁴² Կուտինասայ ժամանակագրութիւն, էջ 52:

Ձեռնարկած արշավանքը թուրքական բանակը «յաջողութեամբ աւարտեց», որի հետեանքով «այնքան անձինս քրիստոնէից ղծերս սրով ջարդեաց եւ զստինայս իսպառ կոտորեաց եւ զտղայս եւ զաղջկունս եւ զմանկամարդս եւ զերիտասարդս զերեւել ցիր ու ցան արարին»⁴³:

«Հիշատակարանի» էջերում քննարկվող հարցերի հաջորդ խումբը վերաբերում է 1716—1718 թթ. թուրք-ավստրիական պատերազմին: Մորեայի հանգեպ տարած հաղթանակից հետո Օսմանյան կայսրության նվաճողական ձգտումներն էլ ավելի ընդարձակվեցին: Նոր պատերազմի առիթ հանդիսացավ ավստրիացիների կողմից թուրքական բանակին Կորֆուի վրա արշավելու համար ճանապարհ տրամադրելու պահանջի մերժումը: Թերազնահատելով հակառակորդի ռազմական կարողությունները, 1716 թ. օգոստոսի սկզբներին թուրքական բանակը Դամադ Ալի փաշայի ղեկավարությամբ շարժվեց դեպի Կառլովիցից ոչ հեռու գտնվող Վերեդինի դաշտը: Լիազմական զործողություններն առաջին իսկ օրից ընթացան ոչ ի նպաստ հարձակվողների՝ օգոստոսի 5-ին թուրքերը Պետրովարադինի մոտ ծանր պարտություն կրեցին⁴⁴:

Սույն հարձակման մասին պատմող հեղինակը հանդամանորեն կանգ է առնում ոչ միայն ճակատամարտի ընթացքի ու արդյունքների վրա, այլև տեղի ունեցած ողբերգության համար հիմնական մեղքը բարդում է թուրքերի վրա. «Ով ուխտագանց եւ արեան ծարաւի քրիստոնէից, ահա հպարտութեամբ բոյ ինչ շահեցար»⁴⁵:

Թուրքական բանակի ջարդված զորամասերի նահանջը բարենպաստ պայմաններ ստեղծեց հակառակորդի ռազմական ուժերի առաջխաղացման համար: Պետրովարադինի գետերից երեք շաբաթ անց՝ 1716 թ. օգոստոսի 25-ին արքայազն Օժյենի զորքերն արդեն կանգնած էին Տիմիշոարի պատերի տակ: Քաղաքի գրավումը բարդացված էր ինչպես «Դ. (4) դիմացն տղմուտ լինելու», այնպես էլ պաշտպանության լավ կազմակերպված լինելու պատճառով⁴⁶: Պաշտպաններին օգնության հասած թուրքական ուժերը չկարողացան վճռորոշ դեր խաղալ ծավալվող անցքերի հետագա ընթացքում, և քաղաքը շուտով հանձնվեց թշնամուն. «Եւ եկեալ տիրեաց նէմսէն. բայց այնքան խնամք արաւ, մինչ զի բերթի միջէն ելեալ Տաճկներուն տունն եւ այլ գահն որ մնալու էր՝ զամէնն ստկով գնեց եւ իւրեանք սիրով ի մէջ Օսմանցոցն ուղաւորեց»⁴⁷: Թուրքերի կողմից քաղաքը թողնելուց հետո պատերազմողների միջև ժամանակավոր զինադադար հաստատվեց, որը երկուստեք փորձում էին օգտագործել նոր նախապատրաստություններ տեսնելու նպատակով. «Եւ թաղաւորն (սուլթան Ահմեդ III) բացեալ զխաղինէն զսկսաւ նոր պատրաստութիւն տեսնել մի ըստ միոջէ, գէրէ քուլլի մնաց նէմսէի մեջ, եւ սկսան թուի շինեսնել եւ այլ ինչ եւ իցէ: Ի Պազտատէն մինչեւ Ուսկուտար, զամէն քաղաքէն առաջվի զուլէն զատ նոր սէրտէն կէշտի»⁴⁸ գրելու»⁴⁹:

Զինադադարի ընթացքում ռազմական ուժերը համալրելուց հետո, 1717 թ. հունիսի 12-ին թուրքական բանակը էդիրնեից դուրս գալով, շարժվեց դեպի Բելգրադ: Որոշ ժամանակ երկու կողմերն էլ խուսափում էին մտնել անմիջական բախման մեջ, մինչև «Շամ դուլիքն եւ Մարա դուլն առաջ մտան ի պատերազմ», բայց սրանք «այնպէս պարտեցան, որ իբրեւ զբայթ մայ-

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ I. Uzunçarşılı. Osmanlı tarihi, cilt IV, I kısım, Karlo'ça anlaşmasından XVIII yüzyılın sonlarına kadar. Ankara, 1956, s. 118—122.

⁴⁵ Կուտինահայ ժամանակագրություն, էջ 57—58:

⁴⁶ I. Uzunçarşılı. Karlo'ça anlaşmasından..., s. 127.

⁴⁷ Կուտինահայ ժամանակագրություն, էջ 62:

⁴⁸ Սէրտէն կէշտի (serdengeçti)—զորքի տեսակ:

⁴⁹ Կուտինահայ ժամանակագրություն, էջ 62:

րևաց բայթահարաց անկանին, այնպէս թիադաւալ անկան անթիւ մարդիկ»⁵⁰։ Հակառակորդի հասցրած հարվածներինց ստիպված՝ թուրքերը դիմեցին փախուստի։ «անկաւ ահ եւ թողումն եւ այնպէս յետս դարձան բախստական զէն ընկէցք եւ ձիւնկէցք մաղապուրցք, ոչ հայր որդին խնայելով եւ ոչ որդի հօր»⁵¹։

Լիակատար ջախջախումից փրկված թուրքական զորամիավորումները, թեև կարճաժամկետ, պատսպարվեցին Բելզրադի ամրոցում։ Օգտագործելով ռազմադաշտում ձեռք բերված ռազմագէներ, ավստրիացիները «սկսան շորս դիմաց պաշարել զբերթն Պելիկրատու»։ Քաղաքի պաշտպանությունը կազմակերպող «Բ. (2) մեծամեծ պարօնք», տեսնելով ստեղծված իրավիճակի անելանելիությունը, «խորեցան տալ վէրէով, որ եղեւ իսկ եւ առեալ զիր զորսն ձեռն. (140.000) ընտիր զինուորօք սիրով եւ խաղաղութեամբ եկին ի միջի Օսմանցոց»⁵²։ Բելզրադի անկմամբ, սակայն, ռազմական զործողությունները շարունակվեցին, «զի Օսմանցոց բանակն Բ. (2) էր»։ Թեև Լեւոնք փաշայի զըլխավորած երկրորդ բանակը կարողացել էր բավականին խորանալ թշնամու թիկունքում՝ «Ժ. (10) ղօնախ առաջ նէմսէի մէջն զնացեալ բանակեցան», և որոշակի նպատակ ունէր «յախտեն զքրիստոնեայս եւ աւար առնուն զինչս եւ զստացուածս եւ տիրեն այս կողմս», սակայն այս բանակը ևս, զգալի կորուստներ տալով, ստիպված եղավ հետևել առաջինի օրինակին՝ «այնչափ ահագին բանակն զողեալ զշարժուն եւ զանշարժուն միայն զհոգիսն ազատելով»։

1716—1718 թթ. ավստրո-թուրքական պատերազմում կրած անհաջողություններից հետո Խուրբիայի կառավարող շրջանները նախընտրեցին բանակ-ցությունների ճանապարհը։ Ըստ «Հիշատակարանի», նրանց խնդրանքով այդ գործընթացին ամենաակտիվ մասնակցություն ցուցաբերեց նաև Ֆրանսիան, բայց «ոչ թէ զՏաճիկն խնայելով, այլ իւրն՝ քանզի ծովեզերք, որ ի Տաճիկ տիրութեան է, իշխեցողք եւ շահառնողք եւ զահրէ կրողք ֆռանսըզն է»⁵³։

Վարվող բանակցությունների արդյունքում Ավստրիայի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց պայմանագիր, որի համաձայն առաջինին էին անցնում «Պօռնա հանդերձ դիմօք», Վալախիայի և Սերբիայի մի մասը՝ Բելզրադի հետ միասին, Տիմիշոարն ու Հյուսիսային Բոսնիան։

Արտաքին քաղաքական խնդիրների քննարկումից բացի «Հիշատակարանի» էջերում տեղեկությունների մի ամբողջ շարք նվիրված է նշանակալի ներպետական անցքերի բացահայտմանն ու նկարագրմանը։ Այդպիսիների թվին է դասվում Օսմանյան կայսրության XVIII դարի պատմության ամենախոշոր դեպքերից մեկը՝ 1730 թ. Պատրոնա Խալիլի ապստամբությունը։

Հեղինակը, հավատարիմ մնալով սկզբնաղբյուրի ընդհանուր շարադրածին, զանց առնելով ապստամբության իրական պատճառները, ներկայացնում է այս հակակառավարական, ապստամբության հիմնական ընթացքը։ Ըստ նրա՝ ամեն ինչ սկսվեց «ի Ստամպոլ», երբ «ի պէտեզէն կողմանէ» «յանկարծակի երեւեցաւ քանի մի զորպայք», որոնք սկզբնական շրջանում «էին իբր Ի (20) հոգիք»։ Մասնակիցների թիվն աստիճանաբար ավելանում էր. «Սակաւ առ սակաւ ժողովեցան եւ բազմացան», որից հետո նրանք «հարին վրան ի էթ մեյտանին եւ նստան»։ Ինչպես ճիշտ նշվում է «Հիշատակարանում», սկզբնական շրջանում ապստամբների դժգոհությունն ուղղված էր ոչ այնքան սուլթանի, որքան նրա մերձավոր մի քանի պետական այրերի դեմ. «Ի թագաւորէս մերմէ շնորհակալեմք, բայց Գ (3) ոմն խնդրեմք ի նմանէ՝ վեզիրն, վեզիր քեհհասին եւ զափթան փաշայն։ Զայս Գ (3) մարդս տա

50 Նույն տեղում, էջ 63։

51 Նույն տեղում։

52 Նույն տեղում, էջ 64։

53 Նույն տեղում, էջ 65։

մեզ բարւօք»⁵⁴։ Ներկայացված պահանջների չկատարման պարագայում նրանք սպառնում էին, որ «ինքն եւս շեմք ընդունիր»⁵⁵։ Քաղաքում կատարվող իրադարձությունների մասին լուրը սուլթանին հասավ այն ժամանակ, երբ նա իր շքախմբով «ի Պէշիկտաշ ուտէին եւ ըմպէին»։ Դեպքերի զարգացման հեղինակի հետագա նկարագրությունը բավականին իմացական է. «Իբրեւ եհաս դիրն առ վէղիրն եւ ի սեղանոյ թագաւորին արտաքս, եւ խորհէր թէ զի՞նչ արասցէ. կարծիս իմն լեալ թագաւորն թէ յաղագս որոյ եւ զնաց վէղիրն արտաքս եւ կոչեաց առ ինքն եւ հարցանէր եւ կամէր տեղեկանալ, թէ զի՞նչ իցէ այն, եւ նա կամէր թագուցանել. եւ ի խոշտանկելն զնա ասաց. Թագաւոր յաւիտեան կաց, թէ զորսպէք երեւեալ են ի Ստամպոլ եւ զամենայն շուկայք եւ խանութք փակեալ կան։ Զայս լուեալ թագաւորն եւ գոյն յերեսաց նորա փախեալ. եւ երիզացան շրթունք նորա, եւ հրամայեաց զիր մեծամեծսն ժողովել առ ինքն. առեալ նստաւ զնոսա զամենեւեան զպալատն արքունի եւ մտեալ ի ներքս՝ փակեցին զդրունսն»⁵⁶։ Ի տարբերություն սուլթանի, որ լուրն իմանալուն պէս «գոյն յերեսաց փախեալ. եւ երիզացան շրթունք», մեծ վեղիրն ավելի վճռականորեն էր տրամադրված և պատրաստ էր ասպետամբների հետ ամենադաժան հաշվեհարդարը տեսնել. «Յայնժամ ասաց վէղիրն ցթագաւորն. Արքայ յաւիտեան կաց, հրաման տուր ինձ սպառազինել զօրս, որք ի ներքս պալատին են, հեծցուք երիվարս եւ ցրուեցից զժողովս նոցա իբրև տարմա ճնճղակաց եւ կոտորեցից զնոսա եւ տապաւնարկից զմարմինս նոցա ի մէջ պողոտային»⁵⁷։ Դժվար է ասել թե ինչ վճիռ կկայացնէր սուլթանն ու ինչպէս կզարգանային հետագա դեպքերը, եթե հարցի քննարկմանը չխառնվէր սուլթանի ավագ որդին. «Իսկ երեց որդի թագաւորին, որ անդ էր, ասաց ցհայրն. Տէր արքայ, վէղիրն քո զայս պատճառաւ կամի փախչել եւ զերծանել. եթէ թողուս զսա վերջն ոչ բարի լինի քեզ»⁵⁸։ Ստեղծված իրավիճակում Ահմեդ III-ը ստիպված եղավ հետեւել որդու խորհուրդներին «եւ հրամայեաց տալ ընդ հայցուածոց նոցա»։ Սուլթանը զիջող գտնվեց ասպետամբների պահանջների, սակայն ոչ դատապարտյալների նկատմամբ. «Յայնժամ աղաչեցին թագաւորին եւ ասացին. Որովհետեւ կամիս տալ ըզմեզ ի ձեռս նոցա»⁵⁹, կենդանի մի տար, զի մի՛ պէս պէս նախատանօք շարշարեցեն զմեզ, այլ դու ինքնին ձեռք քոյովք սպան զմեզ եւ ապա տուր զմարմինս մեր»⁶⁰։ Սուլթանի հրամանով «խեղդեցին զնոսա շուանաւ եւ եղին ի վերայ սայլի եւ հանին պալատէն ի դուրս եւ ետուն ի ձեռս թշնամեաց»։

Ասպետամբների պահանջների կատարումը չփրկեց սուլթանի զահը։ Զանազան պատճառաբանումներ բերելով, ասպետամբները մարդ «առաքեցին ի ներքս առ թագաւորն», ասելով՝ «Թէ ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր», և «իբրեւ ետես թագաւորն ոչ ինչ օգտի՝ առեալ պատուականագոյն իրաց եւ ինքն իւրով ելեալ ի գահոյիցն եւ մտաւ ի պահեստ, ուր այլ թագաւորսն արգիլէին»⁶¹։ Ահա դեպքերի զարգացման այսպիսի շրջապտույտում գահ

54 Ներկայացված այս պահանջների խկությունը հաստատում է նաև Ի. Նեպլունը. «Они ответствовали, что против султана ничего, никакова неудовольствия не имеют, а восстали против несправедливого министерства, которых бы султан им отдал, а именно, везиря, муфтия, и капитан-пашу и везирьского кегаю и реис-эфенды». См. Н. Смирнов. Описание о бунтах 1730 и 1731 гг. в Константинополе. — Археографический сборник за 1960 г., М., 1962, с. 328.

55 Կուտինազայ ժամանակագրություն, էջ 84։

56 Նույն տեղում, էջ 83—84։

57 Նույն տեղում, էջ 84—85։

58 Նույն տեղում, էջ 85։

59 Բնագրում գրված է. «Ի ձեռս Հայոց»։

60 Կուտինազայ ժամանակագրություն, էջ 86։

61 Նույն տեղում։

բարձրացավ նոր սուլթան Մահմուդ I-ը, որին «եւս կամէին իջուցանել յաթոռոյն»:

Ինչպես վերևում արդեն ասվել է, կայսրության պատմությանը վերաբերող էջերի մի մասը «Հիշատակարանում» ներկայացված է զուտ Քյոթահիա քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների նկարագրությամբ: Նախքան առանձին տեղեկությունների վերլուծությանն անդրադառնալը նշենք, որ սկզբնաղբյուրի էջերում արժարժված Քյոթահիայի հայության սոցիալ-իրավական, առևտրատնտեսական, մշակութային ու շինարարական հարցերը ինքնին արդեն հարուստ նյութ են պարունակում քաղաքի պատմության հետազոտման առումով:

Առավել ուշադրության են արժանի այն հատվածները, որոնք հետազոտողին են ներկայացնում քաղաքին բաժին ընկած բնական աղետների ու հրդեհների ողջ պատկերը, հասցված վնասների ու կորուստների իրական չափերը:

Քաղաքին մշտապես հրդեհներից անհանգստություն պատճառող վայր էր դարձել շուկան: Միայն XVII դարի վերջին այն երկու անգամ դրեթե ամբողջովին այրվել էր. «Ի թվին ՌճևԳ. (1143) եղեւ հրկիզութիւն. սկսաւ ի դարբնոցաց շուկայէն եւ այրեցաւ. Ե. (5) դահֆէ արաստայի կիսովն, եւ բոլորքն քակեցին եւ շիջուցին», նույնը կրկնվեց նաև հաջորդ տարին. «Թվին ՌճևԳ. (1144) եղեւ հրկիզութիւն ունեւարի Ե. (5) օրն շաբաթ, եւ էր յայտնութեան խթումն, եւ սկսեց այրվիլ տէմիրճից շառշուէն»: Հասցված վնասն այս անգամ ավելի մեծ էր. «Եւ այրեցաւ զուլումճոց մէջն եւ արաստան բովանդակ, մինչեւ Բ. (2) պէտէսդէն տալանմըջ եղեւ. Ը. (8) դահֆէով եւ ամէն դիմաց բոլորքն քակեցին եւ հազիւ կարացին շիջնել»⁶²: Հուշարձանում գոյություն ունեցող նույն դեպքերի երկրորդ հիշատակության («Դ. (4) ամսոյ մէջն Բ. (2) եանդընն եղեւ նոցա կողմանէն»⁶³) օգնությամբ հնարավոր է ճշտորեն որոշել նաև առաջին հրդեհման ժամանակը: Առաջինը պետք է տեղի ունեցած լինի 1694 թ. սեպտեմբեր ամսին: Պարզվում է նաև հրդեհման հիմնական աղբյուրը՝ «վերի շուկայի դարբնոցին»: Հաճախակի հրդեհները միանգամայն բացատրելի են դառնում շուկայի տարածքում դարբնոցների դտնվելու հանդամանքով⁶⁴:

Շուկայի հերթական հրդեհման լուրն արթնացրեց քաղաքը 1714 թ. ապրիլի 11-ի գիշերը. «Ի թվին ՌճևԳ. (1163) ապրիլ ամսոյ ԺԱ. (11) օրն աշխարամատրան կիրակի դիշերն եղեւ հրկիզութիւն մեծ, որ ոչ է եղեալ այնպիսի վարհուրելի հրկիզութիւն, որ այրեցաւ. Գ. (3) խան. մեծ պէտէստէն, դաքեաճիլեր ճամիսի, սաքանէ ճամիսի՝ ԶՃ (600) խանութով՝ աւելի կամ պակաս, վայրի շուկան պուլուս պէտէստէնէն տաշխանէն զատն. բովանդակ այրեցաւ վերի շառշուն, սաքաքի ճամիսին տալանմըջ եղեւ»⁶⁵: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն նախորդ դեպքերի, այս անգամ հրդեհի պատճառած վնասներն ավելի մեծ չափերի էին հասնում: Թեքեջիլեր և Սաքհանե մզկիթների հրդեհման մասին մեր այս աղբյուրի վկայությունը գալիս է լրացնելու Ի. Ուղունչարըլըրի կողմից նրանց վերականգնման վերաբերյալ ունեցած հիշատակությունը: Հեղինակը նշում է, որ 1764 և 1765 թթ. վերջիններս ենթարկվել են վերանորոգման⁶⁶: Թեև նրանց հրդեհված լինելու մասին տեղեկությունները իրավիճակ են զրանից ուղիղ կես դար առաջ, սա-

⁶² Նույն տեղում, էջ 32—33:

⁶³ Նույն տեղում, էջ 38:

⁶⁴ М. Мейер. Османская империя в XVIII веке. Черты структурного кризиса. М., 1991, с. 106—107.

⁶⁵ Կուտիահայ ժամանակագրութիւն, էջ 45:

⁶⁶ İsmail Hakki. Kütahya şehri, s. 124. 1764 թ. Թեքեջիլեր մզկիթի վերականգնված լինելու մասին է վկայում օսմաներենով պահպանված արձանագրությունը:

կայն հավանական է վերաշինության հարկադրանքը թելադրված է եղել հենց վերահիշյալ հրդեհով:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալ ողջ նյութը, կարելի է բավարար պատկերացում կազմել գիտական այն արժեքի ու նշանակության մասին, որ Թուրքիայի XVI—XVIII դարերի պատմության առանձին խնդիրների հետազոտման հարցում ունի Քյոթահիայի Ս. Աստվածածին եկեղեցու «Քիւթիւկ-Հիշատակարանը»:

ОТРАЖЕНИЕ НЕКОТОРЫХ ВОПРОСОВ ИСТОРИИ ОСМАНСКОЙ ТУРЦИИ В «СИНОДИКЕ» ЦЕРКВИ СВ. БОГОРОДИЦЫ КЮТАХЬИ

С. П. МУРАДЯН

Р е з ю м е

Армянские средневековые исторические памятники в сфере своих интересов включали также политико-экономические, социально-правовые и духовно-культурные вопросы сопредельных стран и народов. Некоторые из этих источников не преследуют специальную историографическую цель, но содержат ценные и важные материалы по истории Турецкого государства. Одним из таковых является «Синодик» церкви св. Богородицы Кютахьи (издан в 1960 г., Вена). Хронологические рамки повествуемых в источнике материалов определяются XV—XVIII веками. В общем русле пересказа событий сообщения «Синодика» с одной стороны существенно дополняют и детализируют уже известные научному миру факты—восстание правителя Алеппо Абаза паши (1658), военно-политические противостояния конца XVII века, Адрианопольский инцидент (1703), падение Тимишоара (1716) и Белграда (1717), восстание Патрона Халиля (1730), а с другой стороны передают единичные по своему роду сведения—массовая христианизация мусульманского населения Морей после ее захвата Венецией в 1690 г., роль валахского господара Константина Бранковича в разжигании русско-турецкой войны 1710—1713 гг., и др. Данные памятника немаловажны и при изучении самой истории города Кютахьи.